Արձանագրություն N5

«ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի նիստ 22.08.2023թ

Մասնակցում էին՝ գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Սերգո Աթանեսյանը, անդամներ՝ Նարինե Մկրտչյանը, Լիլիթ Ավետիսյանը, Նարինե Պապոյանը, Տիգրան Մկրտչյանը և քարտուղար՝ Սուսաննա Ղազարյանը:

Օրակարգ

1. Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու **մասին**

(Ս. Աթանեսյան)

1.1 ՇՄՆ Անտառային կոմիտեի կարիքների համար 2023 թվականի մարտի 27-ին հայտարարված «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով մրցույթի գնային առաջարկի գնահատման արդյունքում հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչված «Եռանկյունի-333» ՍՊԸ-ին ընթացակարգի պահանջներին համապատասխան ուղարկվել է պայմանագրի նախագիծ և վերջինիս ուղղությամբ armeps.am պաշտոնական կայքում իրականացված ընդունման, հրաժարման կամ հրապարակման ընթացք նույն ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել: Արդեն 2023թ. ապրիլի 21-ին «Եռանկյունի-333» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Անտառային կոմիտեի՝ վերոնշյալ մրցույթի պայմանագիր կնքելու որոշման՝ մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ մասն անվավեր ճանաչելու և որպես մասնակցի առաջարկած գին այն 1 հա հողամասի համար սահմանելու պահանջի մասին: 2023թ. մայիսի 23-ի դրությամբ ԵԴ/1748/02/23 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կայացրած որոշման համաձայն՝ փոխվել է հայցի առարկան և հիմքը, այն է՝ «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով մրցույթի պայմանագիր կնքելու որոշման մասնակցի առաջարկած գնի վերաբերյալ մասն անվավեր ճանաչել, սահմանել որպես մասնակցի առաջարկած գին 1 հա հողամասի համար, ինչպես նաև՝ ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտեին պարտավորեցնել կնքել պայմանագիր՝ պայմանագրի գին սահմանելով 35300 ՀՀ դրամ 1 հա հողամասի համար: Դատարանի կողմից հայցադիմումը չբավարարելուց հետո, «Եռանկյունի-333» ՍՊԸ-ն դիմել է վերաքննիչ դատարան և ներկայումս նշյալ ՍՊԸ-ի կողմից հայցադիմումի ու կից փաստաթղթերի դիտարկման, ծանոթացման փուլում է:

Այսպիսով, «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով մրցույթի շրջանակներում ՇՄՆ Անտառային կոմիտեի և 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչված «Եռանկյունի-333» ՍՊԸ-ի միջև չի կնքվել ծառայությունների մատուցման ձեռքբերման պայմանագիր:

2. «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Ս. Աթանեսյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՇՄՆԱԿ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել « Մագիստրալ նախագիծ » ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած հաջորդ տեղ զբաղեցրած մասնակից համաձայն հրավերի 8.20 կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.Գնման պայմանգիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ս. Աթանեսյան)

Անտառային կոմիտեի 2023 թվականի կարիքների համար «Հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման» ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

1. **Հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

նախագահ _____ Ս.Աթանեսյան

անդամներ _____ Ն.Մկրտչյան

_____ Լ.Ավետիսյան

_____ Տ.Մկրտչյան

_____ Ն. Պապոյան

քարտուղար) _____ Ս. Ղազարյան